ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ձևավորված «*ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1*» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.06.2018թ. ժամը 12-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ. Հարությունյանը, անդամներ, Լ, Հովհաննիսյանը, Մ. Անտոնյանը և քարտուղար Ռ.Խաչատրյանը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/66 ծածկագրով որոշման վերաբերյալ

29.05.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/66 ծածկագրով <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը 13.06.2018թ.-ին բողոքը քննող անձի՝ Միհեր Անանյանի որոշմամբ մերժվել է:

Գնահատող հանձնաժողովի որոշման մեջ տեղի ունեցած վրիպման վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովի 14.05.2018 թիվ N 2 արձանագրության մեջ տեղի էր ունեցել վրիպում. 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովում հանդիսացող բանկային երաշխիքում որպես Բենեֆիցիար նշվել է ՀՀ ֆինանսների նախարարության անվանումը. պետք է նշվեր Պատվիրատուի անվանումը: <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մերժել <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը:
2. Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ** –ին:
3. Հաջորդ գնահատման նիստը հրավիրել **2018թ. հունիսի 15-ին, ժամը 12:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Վ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ. Հովհաննիսյան

_____ Մ. Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ.Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ձևավորված «*ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1*» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 15.06.2018թ. ժամը 12-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ. Հարությունյանը, անդամներ, Լ. Հովհաննիսյանը, Մ. Անտոնյանը և քարտուղար Ռ.Խաչատրյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով **«Գազկոմշին» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

- Հաշվի առնելով՝ որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ –ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝ ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝
  1 չափաբաժնի համար՝ **«Գազկոմշին» ՍՊԸ** –ին,

- ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

- Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

- «ՀՀՔԿԴ-ԲՄԱՇՁԲ-ԳՇ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նախագահ _____ Վ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ. Հովհաննիսյան

_____ Մ. Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ.Խաչատրյան